№ 158 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 (27) 1878 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 (27) № 158

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Գանձակից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ս. պատրիարք հօր ատենախօսութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

3 սեպտեմբերի

Տաս տարի սրանից առաջ, երբ ես ուսանում էի հոգևոր դպրոցում, իմ ծանօթներից մէկը առաջարկեց այսպիսի հարց՝—ինչ մարմին է բոլորովին ոչնչանում աչխարհում։ Այս հարցը ամբողջ ամիս զրկել էր ինձ հանգստութենից, ամեն օր մտածում էի և մտածմունքներիս հետևանքը այտնում բարեկամիս, բայց էլի հարցը մնում էր անվճռելի, իմ տուած պատասխանները անհիմն էին դուրս գալիս, բարեկամս էլ այնքան լաւ չը գիտէր իրերի որպիսութիւնը, որ կարողանար միանգամից հասկացնել ինձ նիւթի յաւիտենականութիւնը։ Հէնց այն ժամանակից վրդոված էի թէ՝ ինչու մենք չենք իմանում մեր չորս կողմում ինչ է լինում, ինչու մենք չենք ուսումնասիրում մեզ շրջապատող բնութիւնը։ Ուսումնարանը չէր տալիս ամենատարրական հասկացողութիւն բնութեան վրա, նոյնը գուցէ շարունակվում է և հիմա։ Ուսումնարանի պատերից դուրս հասարակական կեանքը գտնվում է տէօլօգիական շրջանում. բնական ամեն մի երեւոյթ ժողովուրդը մեկնում է գերբնական ուժի զօրութեամբ և քանի մենք չենք ուսումնասիրել բնական երևոյթների օրէնքները և առարկաների յատկութիւնները, պէտք է ընկղմած մնանք նախապաշարմունքների ծովում և պիտի սարսափով նայենք մեր չորս կողմը։ Շ. քաղաքում երկրաշարժ պատահած օրը երեկոյեան ժամերգութենից յետոյ յանկարծ քահանան դառնում է ժողովրդին քարոզով, որտեղ նա քրիստոսասէր ժողովրդին հաւատացնում է, որ երկրաշարժը մեր մեղքի պատիժն է.... Բ. քաղաքում երբ խօլերան շատ զոհեր էր տանում, հայ և օտարազգի հոգևորականութիւնը թափօրով ուզում էր այս իսկ երկրային պատճառներից յառաջացած ցաւը գերբնական միջոցով ոչնչացնել։ Գիտեմ որքան կը գրգռեմ շատ բժամիտների և խաւարասէրների, որոնց օգուտն է պահել ժողովուրդը նախապաշարմունքների մէջ, եթէ ակնարկեմ այդ յիմար, դիւթական միջոցների վրա, որոնք գործ են ածվում զանազան չարիքների դէմ. դեռ չեմ յիշում նախապաշարմունքների այն ահագին բազմութեան մասին, որոնք կրօնական սրբութեան պատրուակով արմատացել են մեր կեանքում....

Բնական գիտութիւնների զարգանալը և տարածվելը մի ազգի մէջ հեշտութեամբ կարող է դուրս մղել այն ազգի աչխարհայեացքից նախապաշարմունքների կոյտերը. այս գիտութիւնները հսկայական քայլերով առաջ են գնում արևմտեան Եւրոպայում. մեզ մնում է միայն այն մշակված գիտութիւնները տարածել հայրենի հողի վրա։ Գրականութեան մէջ դեռ փորձ չէ եղել այս նպատակով, նոյնպէս ուսումնարաններում քիչ բացառութեամբ։

Բայց կայ մի ուրիշ միջոց, որով կարող են բարձր ուսում ստացած պարոնները տարածել ճշմարիտ և առողջ մտքեր ժողովրդի մէջ. այս միջոցն է—հրապարակական դասախօսութիւնները։

Առանց ներքին վրդովման չի կարելի խօսել մեր բարձր ուսում ստացած պարոնների անգործունէութեան մասին. համարեա ամեն հայաբնակ քաղաքում գտնվում են նրանցից մի քանիսը, բայց ընկղմած անտարբերութեան քնի մէջ, ապրում են իրանց անձնական բաւականութեան համար, կրելով կօսմօպօլիտ կեղծ անունը. ուչ, այս պարոնները կօսմօպօլիտներ չեն, այլ անձնասէրներ։ Կօսմօպօլիտի գլխաւոր գաղափարներից մէկն էլ այն է ծառայել այն հասարակութեան, որի մէջ ապրում է, բայց մեր պատուելի համաքաղաքացին ծառայում է իր անձին միայն. երբէք համամարդկային գաղափարները չեն արգելում ծառայելու իր ազգին, ընդհակառակը համամարդկային զարգացման առաջադիմութիւնը պայմանաւորվում է առանձին ազգերի զարգացման աստիճանով. և արդեօք որտեղ մենք կարող ենք աւելի մեծ օգուտով ծառայել, եթէ ոչ այն հասարակութեան մէջ, որտեղ ծնվել ենք, որտեղ հասկանում են մեզ և որը աւելի սիրելի է մեզ։

Մթթէ քիչ օգուտ կարող է տալ բժիշկը, եթէ մեկնէ ժողովրդին, թէ որքան վնասակար են նրա (ժողովրդի) գործ դրած միջոցները զանազան հիւանդութիւնների դէմ, ցոյց տայ ժողովրդի մէջ արմատացած շատ նախապաշարմունքների վատ հետևանքները, տարածէ հիմնաւոր առողջապահական մտքեր. քիչ օգուտ էլ չի տայ նոյն իսկ գիտութեան, եթէ ուսումնասիրէ տեղական բժշկականութիւնը։

Մթթէ չէ կարող իրաւաբանը ծանօթացնել հասարակական դասախօսութիւնների միջոցով մեր ժողովուրդը Եւրոպայում ընդհանրացած ընկերակցական ոգու հետ, արդիւնաբեր ասոցիացիների հետ, զանազան հասարական և տնտեսական գիտութիւնների հետ, մթթէ նա չէ կարող խախտել այն բռնաւորական կազմակերպութիւնը, որը տիրապետում է մեր ընտանեկան շրջանում, արևմտեան Եւրոպայում զարգացած մարդասիրական և արդարութեան գաղափարները տարածելով ժողովրդի մէջ....

Իմ նպատակս չէ որոշել վերոյիշեալ պարոնների գործունէութեան ծրագիրը, այլ ես ակնարկում եմ նրանց անգործունէութեան վրա և հետևապէս յիշեցնում եմ որ կայ մեծ ասպարէզ գործունէութեան և մեծ պարտաւորութիւն գործելու։ Իւրաքանչիւրը նրանցից կարող է ինքն իմանալ, թէ ինչ նպատակի պիտի ծառայէ, բայց որքան ցաւալի կը լինի, եթէ իւրաքանչիւրը նրանցից համոզվի, որ ինքն անպատասխան է ծառայելու հասարակական օգտին։

Ն. Աբէլեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

8 սեպտեմբերի

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով տեղիս երիտասարդութեան մասին մի քանի խօսք ասել։ Այստեղ կայ ազգային ծխական դպրոց և պրոգիմնազիա։ Առաջինը ինչպէս և առհասարակ ամեն տեղ, գտնվում է անխնամութեան դրութեան մէջ և ըստ մեծի մասին ծառայում է ազգի չքաւոր դասակարգին, իսկ երկրորդը ունևոր։ Ազգային դպրոցից դուրս եկածները իսկոյն որոնում են իրանց օրական պիտոյքը հայթայթելու միջոցներ և նոքա մտնում են մեր ջրհեղեղեան վաճառականների և արուեստաւորների մօտ։ Իսկ ինչ որ կը վերաբերի պրոգիմնազիայի ուսանողներին, որոնց կեանքի հետ բաւականին ծանօթ եմ, երբ նոքա աւարտում են իրանց ուսման ընթացքը ու վկայական ստանում կարծում են որ արդէն ուսումնականներ են.... Եթէ կան ուսանողներ որոնք գնում են Թիֆլիսի գիմնազիաներում շարունակելու իրանց ուսումը, նրանցից ևս լինում են զանազան պատճառներով յետ դարձողներ։ Ի՞նչ են անում արդեօք այդ պարոնները։ Ճշմարիտ կարելի է ասել, որ նրանք քաղաքի այս կամ այն փողոցներում պտտելուց երբ զզվում են, դիմում են կառավարութեան այս կամ այն հիմնարկութեան մէջ դրագրութիւն անելու։ Չը պէտք է մոռանալ յիշելու, որ այդ թէ չքաւոր և թէ ունևոր դասակարգերին պատկանող երիտասարդները չը գիտեն իրանց ազգային պատմութիւնը և սէր չեն ցոյց տալիս դէպի ազգի պահանջները։

Երիտասարդութեանը չէ կարելի սաստիկ մեղադրել, թէ ինչ նպատակի պիտի ծառայէ, բայց որքան ցաւալի կը լինի, եթէ իւրաքանչիւրը նրանցից համոզվի, որ ինքն անպատասխան է ծառայելու հասարակական օգտին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան կայսերութիւնը դեսպանաժողովին (Կ. Պոլսոյ) որոշումը չընդունեց. և մենք Հայքս պատճառ չունէինք որ դժգոհէինք տեսնելով որ Բ. Դուռը կը մերժէր բացառիկ ու մասնաւոր չնորհումներ ու բարեկարգութիւնք, որոց արդիւնքը պիտի ըլլար մանաւանդ աւելի դառնացումն մեր վիճակին, զի տուրքերն աւելի մեր վրա պիտի ծանրանային, ինչպէս նաև այն տարերքն որոցմով կը բաղկանայ յոռին այս երկրին կառավարութեան մէջ։ Այլ մեծագոյն չարիք մ'ու աղէտք փբրթաւ ընդհանուր երկրին վրա—պատերազմը։ Օսմանեան կայսերութիւնն այս մեծ պատերազմէն առաջ իր զօրութիւնը գործածած էր. Հէրսէք—Պոսնայի և Պուլղարիոյ ապստամբութեանց դէմ և կանոնաւոր պատերազմ մղելով երկու իշխանութեանց հետ Գարատաղի և Սերպիոյ՝ որոց օգնութեան կը սլանար ինչ որ պաշտօնական կերպարանք չունենալով Սլավ էր, ի լուութիւն դատապարտած էր անոնց զէնքերը։ Հուսկ ապա Պուլղարիոյ արգաւանդ դաշտերը, և աւաղ, մեր այնքան ազգայնոց արեամբն ու քրտինքովն ողողեալ մեր Հայաստանի օրհնեալ դաշտերը, անիծակուռ արհեստին քանդմանցն ու արհաւարց տեսարան եղան։

Օսմանեան ազգը իւր ցեղին յատուկ բնազդովն ոգևորած՝ պահ մը ետ մղեց ահագին թշնամին և յապուշ կրթեց զաչխարհ իր արիական դիմադրութեամբ, ու վերջապէս տեղի տուաւ աւելի մեծ զօրութեան առջև, և Ռուսիոյ յաղթական բանակները մէկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն եկան, և միւս կողմէն մինչև բոլոր Թուրքիոյ մայրաքաղաքն ի Պոլիս։ Ժամը հնչեց խաղաղութեան։ Երկու տէրութեանց բանակցութիւնն սկսաւ Քըզանլըքի մէջ և ընդհանուր պայմանները կռեցան յԱդրիանուպոլիս։ Անմիջապէս պիտի սկսէր դաշնադրութեան բանակցութիւնը։

Ոչ ոք կարող է բուռն զօրութեան դէմ, մանաւանդ երբ բարոյական զօրութիւն միայն ունի և ով ալ ըլլայ չը կրնար փոխել եղելութեանց ընթացքը։ Մեծ խելք և մեծ հեռատեսութիւն պէտք չէր տեսնելու համար թէ երկրին վիճակը կը փոխուէր բոլորովին, և անոր հետ նաև անձնիւր քրիստոնեայ ժողովուրդի դրութեան պայմաններն ալ կը փոխուէր։ Մէկ խօսքով վտանգն ակներև էր ինձի համար և ամենուն համար, որ Հայոց ազգն պիտի կրնար անհետանալ իբր ինքնուրոյն ժողովուրդ, և եթէ իւր գոյութիւնը չամրապնդէր, պիտի ոչնչանար։—Հարստահարութեան խնդրոյն կաւելնար մեծ քան զայն խնդիր, ազգին գոյութեան ու չգոյութեան խնդիրը։

Այլ ընդհանուր պայմանաց մէջ Հայոց ազգին անունն անդամ չը կար և դաշնագրութեան վիճաբանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ։ Գրեթէ յուսահատելու էր և ես չը գիտեմ թէ ինչպէս չը յուսահատեցանք։ Անկարելի է նկարագրել ազգին մորմոքը՝ զոր թողէք ըսեմ, զգացի ի սիրտս և ի բովանդակ անձն իմ. միանգամայն զգացի ահեղն այն պատասխանատուութիւն՝ որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վրաս, զի ազգը իւր երեցփոխանական ժողովովը ազգին խնդիրն ինձի էր յանձնած մասնաւորապէս։ Ցաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր։ Կրնայի ի ժողով կոչել զձեզ, և այն ատեն բան մը չընելով ալ ձեր առջև պատասխանատուութենէ ազատիլ. կըրնայի զոնէ Քաղաքական ժողովով գործել։ Պէտք էր որ այնպիսի պարագայի մէջ նայէի միայն անձնական պատասխանատուութեանց ու ձեր առջև անպարտ ելնելով, խղճիս առջև պարտաւոր մնայի։

Տեսարք երեսփոխանք, անչուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէն այն օրերուն յիշատակը. Օսմանեան ազգը որ առատապէս հեղած էր իր արիւնն ի դաշտ պատերազմաց, այնքան զոհողութիւններէ ետքը իր պարտութիւնը տեսնելով. և այսքան չարեաց սկզբնապատճառ Քրիստոնէութեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի գրգռութիւն մը ղգար։ Աւելի քան երբէք պէտք էր խոհեմութեամբ ու շրջահայեցութեամբ գործել. այլ նաև ուժով և ազդու կերպով գործել։ Ձեր պարիարգը մտածեց, խորհրդակեցաւ։ Իր շուրջը ունէր բոլոր եպիսկոպոսական դասը պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին և յանուն ազգին զոհուելու եթէ պէտք ըլլար։ Միացաւ իր սրբազան եղբարց հետ՝ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երդուեալ էին, նորէն երդուան նուիրել զանձինս ազգին։

Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղեւորած յԱնդրիանուպոլիս, ես ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք։ Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուզեցինք. այն է Հայոց յիշատակութիւնը դաշնադրութեան մէջ. և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւնն եղաւ մասնաւոր յօդուածով մը։ Արդեօք ճիշդ մեր ուզածին պէս եղաւ յիշատակութիւնը.—ոչ. այլ քաղաքականութեան մէջ՝ «երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընել ինչ որ կրնաս»։

Աւասիկ Այ—Ստեփանոսի դաշնադրութեան 16-դ յօդուածը։

«Նկատելով որ Ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած, բայց Թուրքիոյ վերադարձնուելիք տեղերէն մեկնիլը՝ կրնայ կռիւներու և երկու տէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ. Դուռը պարտաւորութիւն յանձն կառնու Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարւոքումներն ու բարենորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Քիւրդերուն ու Չերքեզներուն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորելու։

Այս յօդուածին ուժովը Քիւրդերուն ու Չերքեզներուն հարստահարութեանց դէմ ապահովեալ էին Հայք. իրենց տասը տարիէ ի վեր արձակած աղաղակը վերջապէս արձագանք կը գտնէր ու մեր յանուն ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուէր ըստ սկզբան՝ և համազգային իրաւանց կարգին մէջ կը մնար։ Այլ մեր ազգային խնդիրը Արևելեան ընդհանուր խնդրոյն հետ նոր կերպարանք ու նշանակութիւն առած էր։

Այս երկիրը մինչև այսօր կառավարուեցաւ Ցաճիկ պաշտօնատարաց ձեռքով և այսօր հասարակ եղած ճշմարտութիւն մ'է պաշտօնատարց յոռութիւնը. այնպէս զի նոյն իսկ Բ. Դուռը և երկրին վեհապետը քանիցս հռչակեցին զայն։ Արդ ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Հայաստանի համար թէ հայ ժողովուրդին պատուհասը Քիւրդերն են միայն ու Չերքեզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են։ Այս պաշտօնատարաց մէջ Հայաստանի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը գրեթէ և ոչ մէկ Հայ պաշտօնատար մը կայ։

Պատերազմէն առաջ մեր Վեհափառ ինքնակալը, այս մեծատարած կայսրութեան միահեծան Տէր, սահմանադրութեամբ և հաւատարմութեան սկզբունքով փորձեց լուծել Արևելեան խնդիրը, կրօնքի խորութիւնը վերցունելով քաղաքական ու վարչական խնդիրներու մէջ ու տէ-

ղադրել, այլ նրանց ծնողացը, որովհետև այստեղ դեռ եօթը—ութը տարեկան հասակում երեխային տալիս են պրոգիմնազիա առանց ծանօթացնելու նրան մայրենի լեզուի և ազգի պատմութեան հետ։ Տարակոյս չը կայ որ ամեն տեղ և ամեն գործի մէջ լինում են բացառութիւններ, բայց այդ ևս այստեղ սակաւաթիւ է։ Միայն մի բան սաստիկ նկատելի է, այն է լրագրութեան ազդեցութիւնը մեր երիտասարդութեան վրա։ Այդ փառքը առաւել պատկանում է «Մշակ» լրագրին, որ իր գոյութեան առաջին տարուց սկսած մինչև այժմ մատնանիշ է անում մեզ—ընդհանրապէս հայերիս մեր պակասութիւնները։

Վերջին ժամանակի ազգայնութեան վերաբերեալ յօդուածների շարքը մեծ ազդեցութիւն գործեց. նա տեղական երիտասարդների մէջ ծագեցրեց ինքնաճանաչութիւն և սէր դէպի իրանց ազգութիւնը։ Ես չափազանցութիւն չեմ անում։ Ազգի բարեկամը նա է որ ցոյց է տալիս նրա վատ կողմերը և առաջարկում է միջոցներ նրան բարւոքելու։

Ափսոս որ մեր մէջ մայրենի լեզուով հրատարակված լրագիրներ շատ քիչ են ստացվում և դեռ այժմ էլ կան այնպիսի պարոններ, որոնց երբ հարցնում ես թէ արդեօք ինչ աւելի լաւ բան են գտնում նրանք «Тифлис. Вѣстн.» «Обзоръ» լրագիրներում քան թէ ազգային պարբերական թերթի մէջ, պատասխանում են. «աւելի ոչինչ, բայց ինչ անենք, չենք հասկանում, նրանք գրաբառ են գրում։» Ահա այսպէս մեր այժմեան հասկանալի աշխարհաբառը անմատչելի գրաբառ է երևում մեր պարոններին, որովհետև և դրանք ոչ մի անգամ նեղութիւն չեն յանձն առել վերցնել մայրենի լեզուով հրատարակվող լրագիր և կարդալ։

Մենք պէտք է օրինակ առնէինք տեղիցս 7 վերստ հեռաւորութեամբ գտնվող գերմանացի կոլոնիստներից, որոնց պատահում են այնտեղ զբօսնելու ժամանակ։ Համեստ կոլոնիստները նստած պատուհանների առաջ կարդում են հայրենիքից (Գերմանիայից) ստացած լրագիրները, իսկ մենք փառաւոր կերպով ձգված ֆայետոնի մէջ, անցնում ենք նրանց առջևը և առատութեամբ մխում մեր մանէթները ֆայետոնների և զանազան զուարճութիւնների վրա, իսկ լրագրին ոչինչ չենք կամենում տալ։

Ես մտադիր չեմ տեղիս երիտասարդների պատիւը մրոտել, բայց համարձակվում եմ նրանց մի հարց առաջարկելու՝ ասենք թէ արդարև նրանց չեն սովորեցրել իրանց ազգային պատմութիւնը և մայրենի լեզուն, միթէ դրանք չը պէտք է հետաքրքրվեն դրանցով։ Վերջապէս միթէ մի փոքրիկ առաջադիմութիւն չը պէտք է

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս. 12 սեպտ.

Շուշու սեմինարիայում ուսուցիչ եղած միջոցում նոյն քաղաքի հարուստներից մինը՝ պ. Բաբա Բէգիլարով քանի մի անգամ խնդրեց ինձ յանձնառու լինել պարապելու մասնաւոր դասերով նաև իր որդու և իր եղբօր որդու հետ՝ դասը մի ռուբլով։

Ես պարապել սկսեցի։ 21 դաս տալուց յետոյ նամակով խնդրեցի նրան հասցնել ինձ քսան և մի ռուբլ իմ օրինաւոր ռոճիկը, բայց պ. Բէգիլարով լռութեան տուեց։ Ես զիմել եմ նրան այս մասին շատ անգամ...

Այժմ, մեծ. խմբագիր, ձեր պատուական լրագրի միջոցով խոնարհաբար նորից դիմում եմ պ. Բէգիլարովին և խնդրում այդ 21 դասի վարձը չուտով հասցնէ ձեզ իմ կողմից, որպէս նուէր Վանի «Արարատեան ընկերութեան»։

Ցոյս ունեմ թէ յիշեալ ազգասէր պարոնը չի զրկի մի հայ ուսուցչի օրինաւոր չնչին վարձը և դորանով էլ խափանիչ չի լինի իմ բարեգործական փափագին...

Գրիգոր Պապեան

մասին, ուր վերջապէս բազմութեամբ են քրիստոնեայք և անոնց վարչութիւնք յանձնել այն ազգէն քրիստոնեայ պաշտօնատարաց՝ անփոփոխ և անվթար պահելով Վեհ. Կայսեր վեհապետական իշխանութիւնը. այսպէս՝ Հերսէք, այսպէս՝ Պասնա, այսպէս՝ Պուլկարիա, այսպէս՝ Յունական գաւառը, այսպէս՝ Հայաստան. և մնացեալ բոլոր գաւառաց մէջ անթերի պահել Տաճիկ պաշտօնատարներով վարչութիւնը, թէև գտնուին հոն քրիստոնեայք, բայց ուր չեն այն քրիստոնէից ազգութեան օրրանք, և ուր սակաւաթիւք են սոքա։ Գաւառաց այս կերպ որոշումը՝ ըստ մեզ բնաւ քաղաքական կերպարանք կամ հետեւանք պիտի չունենար։

Մեր ազգային խնդրոյն այս մասն է ահա որ չէր լուծուած Այ—Ստէփանոսի դաշնադրութեան 16-րդ յօդուածին մէջ, այլ և ոչ բոլորովին բարձի թողի էր եղած. զի ինչ որ ընդհանուր կերպով վարչական բարեկարգութիւն ու բարւոքում տրամադրած էր յօդուածն այն, հոն պիտի երթար յանգեր վերջապէս. զի հոն էր բարւոք վարչութեան խնդրոյն միակ կարելի լուծումը. և այլ ամենայն լուծում անհաստատ ու անիրաւ պիտի ըլլար։ Եւ մենք ազգովին պարտաւոր ենք այն պետական աւագ անձանց, որ դաշնադրութեան այդ յօդուածը ստորագրեցին. և հոս բարեպատեհ առիթ կը գտնեմ այդ երախտագիտութիւնը յանուն ազգին յայտնելու իրենց, և որոց մին այսօր՝ իր չրջահայեաց, խոհեմ ու ամբիչ հանճարովը կը վարէ դժուար ու փափուկ պարագայից մէջ այս երկրին ներքին ու արտաքին քաղաքականութիւնը։

Այ—Ստէփանոսի դաշնադրութեան 16-րորդ յօդուածը երբ ձեռք անցուցինք, նոր ոգի առինք և աւելի եռանդեամբ սկսանք աշխատել։ Մեր գործը չէր լմնցած, այլ սկսած էր։ Ցայտնի էր որ Այ—Ստէփանոսի դաշնադրութիւնը ինչպէս որ էր՝ այնպէս պիտի չը մնար. իր զանազան տրամադրութիւնքը Եւրոպական բովէն անցնելով փոփոխութիւններ պիտի կրէին։ Մասնաւորապէս 16-րդ յօդուածն ալ անպատճառ փոփոխութեան ենթակայ պիտի ըլլար։ Ինչ որ Եւրոպական քաղաքականութեան շահուց հետ սերտ առընչութիւն ունէր Դանուբի հովտին ապագայ քաղաքական վիճակը. նոյն կերպով և թերևս աւելի չօշափելի կերպով Եփրատայ հովտին ապագայ քաղաքական վիճակը առընչութիւն ունէր Անգղիական շահուց հետ։

Որչափ ալ անշահասէր ըլլար և Հայասէր միայն՝ այն զգացումն որ 16-րորդ յօդուածին խմբագրութեանը առաջնորդած էր, Անգղիան պիտի տեսնէր որ այդ յօդուածը Եփրատայ հովտի մէջ նոր քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ստորագրող տէրութեանց միոյն քաղաքական շահուց տեսակէտին պատասխանել, Անգղիա պիտի չընդունէր զայս։ Կամ յօդուածը վերցուն ելու պիտի աշխատէր կամ փոխելու։ Դիտմամբ կարտասանեմ վերցունել բառը, զի եղան քաղաքագիտաց շրթունք՝ որ հնչեցին այս բառը. այլ անկարելի էր վերցնել, զի անմարդասիրութիւնն ու խժդժութիւնը անկարելի էր Անգղիոյ ազատամիտ ազգին համար։ Կը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով՝ որ յօդուածը մնայ իբրև Հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար և Հայկական խնդիրը չէզոքանայ, այսինքն լոկ Հայկական խնդիր ըլլայ։

Բայց մենք ալ մեր կողմէն պէտք էր որ աշխատէինք, պէտք էր մեր մոռցուած անունը յիշեցնէինք՝ երբեմն մեզի հետ ապրող և այսօր կորսուած հին ու փառաւոր ազգերուն թոռանցը Եւրոպայի մէջ. պէտք էր դիտնար Եւրոպա որ Հայ ազգը կը զգայ ինքզինքը և գիտէ իր իրաւունքը պաշտպանել։ Խորէն սրբազան ուղևորեցաւ ի Բէթերսպուրկ, և Խրիմեան սրբազան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Վաղարշապատ, 25 օգոստ.

Խնդրեմ ձեր լրագրի մէջ հրատարակէք հետեւեալը՝

Պատրաստած եմ ժողովրդական դասագիրք «Քրիստոնէական հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» որ հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ. Տ. Գէորգայ Դ-ի արդէն քննված է Ս. Էջմիածնի ճեմարանի ուսումնական ժողովից և ստացած Նորին Ս. Օծութեան բարձր հաճութիւն տպագրութեան։

Սոյն ժողովրդական դասագիրքս բաղկանում է գրեթէ 400 երես քառածալ—թերթից հետեւեալ յատկութեամբ և բովանդակութեամբ։

Ա. Հայաստանի ամեն դաւառի ընթերցողներին դիւրահասկանալի է իր պարզ գրաբառի մօտ աշխարհաբառ ոճովն, չը հետեւելով այս կամ այն դաւառական ոճին։

Բ. Հեշտութեամբ միտք կը պահվի իր հետաքրքիր հարցերով և ամբողջ ամփոփ ու պարզ պատասխաններով համապատչաճ վկայութեամբ Ս. Գրոց հաստատեալ, համեստ խօսքերով պաշտպանողական (ոչ յարձակմամբ այլակրօնից վրա) չը զիջանելով Հայաստանեաց եկեղեցւոյ ազատամտութեան վեհանձն աստիճանէն ստորանալ, հաւասարել հակառակորդաց՝ անհամեստ հարցմանց անհամեստութեամբ պատասխանել։

Գ. Աշխարհի գլխաւոր կրօնից և նոցա բաժանմանց վրա բաւական հմտութիւն կը ստանայ ընթերցողն դասագրքիս նախագիտելիք կոչված մասի մէջ, նաև քրիստոնէական կրօնի և նրա երեք մեծ ճիւղերի վրա, այսինքն. արևելեան և արևմտեան եկեղեցւոյ և բողոքականութեան կամ նորազանդութեան վրա, և ընդարձակօրէն Հայաստանեայց եկեղեցւոյ կազմակերպութեան և ինքնուրոյնութեան վրա։

Դ. Քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան միակ աղբիւրն Աստուածաշունչ ս. գիրք գալով, նախ՝ նրա ճշմարտութիւն հաստատած եմ անհերքելի փաստերով, հանդերձ համառօտ բովանդակութեամբ 72 գրքերու (45 հին և 27 նոր) մի առ մի նշանակելով բողոքականաց ս. գիրք կոչվածի պակասներն և խանգարմունքն, որով այլ ևս ս. գիրք կոչվելու յատկութիւնէն ելած որոմանց ծրատ մի դարձած է կամ բովանդակորեան բուսանելոյ անպետ։ Այս ամենը բովանդակած է նախագիտելիք կոչված մասի մէջ։

Ե. Իսկ Ա. և Բ. մասերու մէջ, գրած եմ քրիստոնէական հաւատոյ երկոտասան մասանց որ է հանգանակի բացատրութիւն, առանձին գլխահամարներով, բնական պատճառներով և համապատչաճ վկայութեամբ ս. գրոց հերքած եմ անկրօնից, անհաւատից և աղանդաւորաց պատճառաբանութիւնք, պաշտպանելով Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնն։

Զ. Քրիստոսի մարդեղութեան վրա ընդարձակ գրած եմ իբրև համաբարբառ Աւետարանչաց պատմութեան, հանդերձ վկայութեամբք իւրաքանչիւր փրկագործ տնօրէնութեանց վրա եղած նախագուշակութեանց և կատարմանց, ընդ նմին և Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ և նրա Ս. խորհրդոց մատակարարութեանց վրա ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ ընդարձակ գրած եմ, նաև Աստուծոյ հին և նոր օրինաց վրա լիովին բացատրութիւն տուած եմ։

Է. Իբրև յաւելուած գրած եմ Հայաստանեայց եկեղեցւոյ բարեպաշտական ծիսից և արարողութեանց վրա, որք են տօնակատարութիւնք, հրապարակական աղօթատեղիք. Ս. Խաչին և սրբոց պատկերաց և մասանց յարգութիւնք։ Պահք, աղօթք վասն ննջեցելոց և բարեխօսութիւն սրբոց։ Վերջապէս ինչ ուղիղ վարդապետութիւն որ կարելի է ուսանել մինչ ցարդ տրպագրեալ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեան դասագրեանց մէջ, նոյնը հեշտութեամբ կարելի է ուսանել սոյն ժողովրդական դասագիրքովս, որ նոցա բովանդակութիւն է և ծաղկաքաղ, զոր նուիրում եմ ի փառս Հայաստանեայց եկեղեցւոյ և ի պաշտպանութիւն նրա ուղղափառութեան ընդդէմ աղանդաւորաց և անկրօնից։

Ուստի սոյն յայտարարութեամբ դիմում եմ Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտպան Ջերմեռանդ անձանց ձեռնտուութեան ի լոյս ընծայելու նոցա ընկերութեամբ և բաժանորդութեամբ. ընկերութեամբ բաժանորդագինն է տասն ռուբլի, որ պիտի ստանայ քսան օրինակ դասագիրք, մի օրինակն մի ռուբլ 20 կոպ. արժողութեամբ։ Երբ գտնեմ երեսուն բաժանորդ, անմիջապէս պիտի յանձնեմ տպագրութեան, ընկերութեան անունք պիտի տպուին դասագրքիս վերջն իբրև ԲԱՐԵՐԱՐՔ։ Ընդունում եմ նաև բաժանորդներ, մի բաժանորդագինն մի ռուբլի, որք պիտի ստանան մի մի օրինակ դասագիրք նոյն արժողութեամբ, որոց անունք ևս պիտի տպուին իբրև ՁԵՌՆՏՈՒՐՔ։ Մնացեալ օրինակներից հարիւր օրինակ նուիրում եմ վանայ «Արարատեան ընկերութեան» և տասն ուսումնարանաց նոյն քաղաքի, ուր այժմ բողոքական քարոզիչք ի շնորհս Անգղիոյ պաշտպանութեան լայն ասպարէզ գրտած են համարձակ որսեր անելու. սոյն դասագիրքն իբրև յարմարագոյն ձեռնարկ՝ կարող է պաշտպանել Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղա-

---

զան տրամադրութիւնքը Եւրոպական բովէն անցնելով փոփոխութիւններ պիտի կրէին։ Մասնաւորապէս 16-րդ յօդուածն ալ անպատճառ փոփոխութեան ենթակայ պիտի ըլլար։ Ինչ որ Եւրոպական քաղաքականութեան շահուց հետ սերտ առընչութիւն ունէր Դանուբի հովտին ապագայ քաղաքական վիճակը. նոյն կերպով և թերևս աւելի չօշափելի կերպով Եփրատայ հովտին ապագայ քաղաքական վիճակը առընչութիւն ունէր Անգղիական շահուց հետ։

Որչափ ալ անշահասէր ըլլար և Հայասէր միայն՝ այն զգացումն որ 16-րորդ յօդուածին խմբագրութեանը առաջնորդած էր, Անգղիան պիտի տեսնէր որ այդ յօդուածը Եփրատայ հովտի մէջ նոր քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ստորագրող տէրութեանց միոյն քաղաքական շահուց տեսակէտին պատասխանել, Անգղիա պիտի չընդունէր զայս։ Կամ յօդուածը վերցունելու պիտի աշխատէր կամ փոխելու։ Դիտմամբ կարտասանեմ վերցունել բառը, զի եղան քաղաքագիտաց շրթունք՝ որ հնչեցին այս բառը. այլ անկարելի էր վերցնել, զի անմարդասիրութիւնն ու խժդժութիւնը անկարելի էր Անգղիոյ ազատամիտ ազգին համար։ Կը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով՝ որ յօդուածը մնայ իբրև Հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար և Հայկական խնդիրը չէզոքանայ, այսինքն լոկ Հայկական խնդիր ըլլայ։

Բայց մենք ալ մեր կողմէն պէտք էր որ աշխատէինք, պէտք էր մեր մոռցուած անունը յիշեցնէինք՝ երբեմն մեզի հետ ապրող և այսօր կորսուած հին ու փառաւոր ազգերուն թոռանցը Եւրոպայի մէջ. պէտք էր դիտնար Եւրոպա որ Հայ ազգը կը զգայ ինքզինքը և գիտէ իր իրաւունքը պաշտպանել։ Խորէն սրբազան ուղևորեցաւ ի Բէթերսպուրկ, և Խրիմեան սրբազան

յարևմուտս Եւրոպիոյ իրեն թարգման ունենալով ազգային երիտասարդութեան փայլերէն մին՝ որ իր նորահաս ու միանգամայն հասուն հանճարովը մեր Հայոցս ապագայ գեղեցիկ յոյսերը պատկերացուց Եւրոպիոյ առջև, ինչպէս Խրիմեան սրբազան ալ Հայաստանի փառաց սուգը ու դժբաղդութեան մէջ համբերատար աղնութիւնը կը ներկայացնէր իր դէմքին վրա, ինչպէս Խորէն սրբազան ալ հին յիշատակներով թրթռուն և նոր յոյսերով բաբախուն սիրտը ազգին։ Ասոնք պատգամաւորք էին պաշտօնապէս ազգին կողմէն. իսկ ամեն Հայու պարտքն էր գործակցիլ իրենց, և իմ իրաւունքս էր այսպիսի պարագայի մէջ Հայութեան բոլոր զաւակացը դիմել, քանի և ուր որ պէտք ըլլար։ Որուն սիրտը Հայու արիւնով կը թրթռար և որ կարող կը զգար զինքը օգտակար ըլլալու ազգին, գործակցեցաւ հոս ինձի և հոն ազգային պատգամաւորաց։ Եւ զի ջանքն ընդհանուր եղաւ. ընդհանուր եղաւ նաև համակրութիւնը որ ամեն կողմէն սկսաւ ծնիլ ու բազմանալ մեր ազգին համար. օրագիրք թարգման եղան այս համակրական զգացմանց, պաշտպան կացին մեր դատին գրեթէ առանց բացառութեան ամենուրեք, ժողովրդական ակումբներ կազմեցան և քաղաքական բեմերն իսկ որոտացին մեր ազգային խնդրոյն վիճաբանութեամբ։ Կրնայինք ըսել թէ Եւրոպիոյ զգացումն ի մեր կողմն էր. զգացում, աւաղ, առաջուց գիտէի թէ այս դարուս մէջ շահը միայն կը խօսի և մանաւանդ շահը միայն պիտի խօսի այն ծերացեալ ու գործոց մէջ կարծրացեալ քաղաքագիտաց ակումբին մէջ որ պիտի գումարէր ի Պերլին. այլ մենք շահն ալ ի մեր կողմ ձգած էինք։ Գիչ մ' առաջ ըսի արդէն թէ ինչպէս։

(Կը շարունակվի)

փառութիւնը և հերքել հերձուածողաց աղանդն։

Ցուսով եմ որ աղգասէր անդամք ընկերութեան տպագրութիւն, ինքեանք ևս իւրեանց բաժիններից քանի մի օրինակներ պիտի նուիրեն նոյն փորձութեան մաղի մէջ անկած ուղղափառ վանեցւոց. նուէրներն ևս պիտի տպուին դասագրքիս վերջն։

Սարգիս Բարսեղեան Գնունի վանեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍԻ բնակիչ հայ երիտասարդ վաճառականներից մէկը խնդրում է մեզ հրատարակել հետևեալը. «Ամուսնանալով մի օրիորդի հետ և իմ աներոջ տանը բնակվելով, ես դարձայ այն քահանայի ժողովուրդ, որ հովում էր իմ աներոջը։ Հայր Սրապիոն աւագ քահանայ Տէր-Մովսէսեանց փոխանակ ինք հասկանալու և դադարելու իմ տան եկեղեցական կարգերը կատարելուց, նա առաջվայ պէս շարունակում էր այցելել իմ տունը։ Ես նրան չէի մերժում, բայց մի և նոյն ժամանակ չէի էլ վարձատրում։ Վերջապէս քահանան ինձանից մեկնութիւն պահանջեց։ Ես նրան ասացի, որ իրան պէտք է յայտնի լինի մեր սովորութիւնը և ինձ նա պէտք է թողնէր այն ժամանակից, երբ ես սկսեցի իմ աներոջ տանը ապրել։ Քահանան ինձ հետևեալ պատասխանը տուեց. «երբ դու քո ազգը կը փոխես, այն ժամանակ ես քեզ կը թողնեմ»։ Կարծում եմ, որ քահանային վայել չէ այսպիսի վիրաւորական խօսքեր ասել»։

—

Մեզ հաղորդում են ԳԱՆԶԱԿԻՑ, որ այնտեղ ստորագրութիւն է բացված յօգուտ «Արարատեան ընկերութեան։»

—

Մեզ գրում են ՂԱՐՍԻՑ, որ օգոստոսի 26-ին Նորին Կայսերական Մեծութեան թագադրութեան օրվայ պատճառով Ղարսի առաջնորդ Գրիգորիոս Աղվանեան չքեղ հացկերոյթ տուեց, որին հրաւիրված էին գեներալ Լազարեվ, ռուս պաշտօնեաներ և հայ հասարակութեան պատուաւոր անձինք։ Ճաշի ժամանակ մի քանի ճառեր խօսվեցան։

—

Մեզ գրում են ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ. «Այստեղ վերջին ժամանակները յաճախ են պատահում գողութիւններ, որովհետև անգործ մարդկերանց թիւը չատանում է։ Վաղուց այստեղ մարդասպանութիւն չէր եղել, իսկ սեպտեմբերի 9-ին գիշերը մի մարդ քանդել էր իր հարևանի տանիքը և կամեցել էր իջնել տուն գօնժուանական նպատակով։ Խանդոտ պակված տան տէրը հրացանով խփել է անկոչ հիւրին և սպանել»։

—

Մեզ գրում են հետևեալը. «ԱԽԱԼՔԱԼԱՔԻ բնակիչներից երկուսը խաբում են մի գիւղացու իրանց զօրքերի կապալառու անուանելով, կապակցութիւն են անում նրա հետ և պուդը չորս ռուբլով նրանից միս են առնում և երեք ռուբլով ծախում են քաղաքի մսավաճառի վրա։ Ամիսը լրանալուց յետոյ, երբ պէտք է գիւղացուն փող վճարէին խաբեբաները նրան հարբեցնում են և մուրհակի վրա գրում են, որ փողը վճարած է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական մինիստրները հեռագրեցին ընդունում են անգլիական քաղաքական մարդկերանց սովորութիւնը և օգուտ քաղելով ազգային ժողովի արձակուրդներից շրջում են երկրի մէջ, զանազան ժողովներում ճառեր են կարդում և մեկնում են իրանց հայեացքները քաղաքական գործերի դրութեան վրա։

Ներկայումս հասարակական աշխատանքների մինիստր Պ. Ֆրէյսինէ և ֆինանսների մինիստր պ. Լէօն Սէ ճանապարհորդում են Ֆրանսիայի հիւսիսային նահանգներում։ Նոքա այցելեցին գլխաւոր ծովեզերեայ քաղաքները, ինչպէս Կալէ, Բուլօն և այլն։ Ամեն տեղ հասարակութիւնը և տեղական իշխանութիւնը նրանց ոգևորութեամբ են ընդունում և կազմում են բանկետներ, որոնց ժամանակ մինիստրները միջոց են ունենում յայտնել իրանց դիտաւորութիւնները յիշեալ նշանաւոր առևտրական նաւահանգիստները ընդարձակելու և նրանց մէջ նոր շինութիւններ անելու մասին։

Ֆինանսների և հասարակական աշխատանքների մինիստրների միասին արած ճանապարհորդութիւնը մեծ նշանակութիւն ունի այն պատճառով, որ այդ ընկերութիւնը փարատում է հասարակութեան մէջ տարածված լուրերը յիշեալ երկու մինիստրների մէջ եղած տարաձայնութեան մասին և մի և նոյն ժամանակ Լէօն Սէին համերաշխ է անում Ֆրէյսինէի հետ և պարտաւորում է առաջինին ֆինանսական ընդարձակ օգնութիւն հասցնել իր ընկերոջը ծովեզերեայ քաղաքները ընդարձակելու և մի քանի նոր նաւահանգիստներ կառուցանելու համար։

Հասարակութիւնը յոյս ունէր, որ Լէօն Սէ առաջին յարմար միջոցից օգուտ կը քաղէ և կը մեկնէ իր հայեացքները թէ նոր փոխառութեան և թէ 5% տոկոսի 4% դարձնելու վերաբերութեամբ։ Վերջին կէտի մասին հասարակութեան յոյսը ի դերև անցաւ. Լէօն Սէ իր ճառերի մէջ ոչինչ չասաց այդ կէտի վերաբերութեամբ։ Ասում են, որ ֆինանսների մինիստրի լռութեան պատճառը Գամբէտան է, որ մինիստրի դուրս գալուց առաջ այցելեց նրան և համոզեց այդ մասին իր վրա ոչինչ պարտաւորութիւն չառնել։

Այնու ամենայնիւ մինիստրների ճառերը շատ հետաքրքիր են։ Ֆրէյսինէ իր թէ ձևի և թէ բովանդակութեան կողմից գեղեցիկ ճառերով կրկին անգամ յայտնեց իր հաստատ դիտաւորութիւնը վերջացնել իր սկսած հասարակական աշխատանքները։ Նա բոլորովին չը ծածկեց, որ այդ աշխատանքները սկսված են ոչ թէ միայն երկրի բարօրութիւնը զօրեղացնելու համար, այլ և հաւատացած է որ բաւականութիւն տալով երկրի օրական պիտոյքներին, կառավարութեան բոլոր միջոցները բացառապէս ազգի օգտի համար գործածելով, ներկայ մինիստրութիւնը աւելի շուտ կը հասնի իր նպատակին և վերջնականապէս կը հաստատէ հանրապետութիւնը։ «Հանրապետութիւնը այդպիսով կը գրաւէ իր բոլոր ազնիւ հակառակորդներին և վենաթափ կանէ իր թշնամիներին,» ասել է Ֆրէյսինէ իր ճառերից մէկի մէջ։ «Ես խոստումների թշնամի եմ, ասել է նա մի ուրիշ ճառի մէջ, բայց խոստանում եմ միայն այն ժամանակ, երբ հաւատացած եմ, որ խոստացածից աւելի կարող եմ անել։»

Այն սրտալի ոգևորութիւնը, որով ընդունվում են այդ ազնիւ և եռանդոտ պետական մարդու խօսքերը, Ֆրանսիայում մինչև այժմ օրինակ չէ ունեցել։ Ֆրէյսինէ թշնամի է թատրօնական ֆրազների, նա գրաւում է իր լսողներին նրանով, որ իր խօսքերի հետևանքները ազդու փաստեր են լինում։

Հետաքրքիր են նոյնպէս ֆինանսների մինիստր պ. Լէօն Սէի ճառերը։ Ամենից առաջ Լէօն Սէ յայտնեց, որ նա հաւանում է իր ընկերոջ հասարակական աշխատանքներին վերաբերող դիտաւորութիւնները և որ նրանք կիրագործվեն Ֆրանսիական ժողովրդի խնայողութեան միացորդներով, առանց գործածելու Ֆրանսիայի կրեդիտը, առանց ծանրաբեռնելու նրա ֆինանսները։ Լէօն Սէ չը բաւականացաւ այդ խօսքերով և իսկոյն թուանշաններ ներկայացրեց։ Այս տարի, չը նայելով, որ հասարակական աշխատանքներ են սկսված, որ Ֆրանսիային ճշնշում էր արդիւնաբերական կրիզիս, ֆինանսների մինիստրը առաջին կէս տարվայ ընթացքում յանձնեց կառավարութեանը 400 միլիոն ֆրանկ խնայած դումարից և դումարների առատութիւնը երկրի մէջ դրանից չը վնասվեց։ Իսկ Ֆրէյսինէի դիտաւորութիւնները իրագործելու համար բաւական է որ տաս տարիների ընթացքում իւրաքանչիւր տարի 500 միլիոն Ֆրանկ ծախվի։

Ֆինանսների մինիստր բոլորովին ճշմարիտ նկատեց, որ վերջին 3% փոխառութիւնը հաստատեց, որ Ֆրանսիան մեծ կրեդիտ ունի։ «Առաջին անգամ Ֆրանսիան փող է փոխառնում 4%-ից էժան, ասել է նա հպարտութեամբ, առաջին անգամ Ֆրանսիայի կրեդիտը հաւասար է Անգլիայի կրեդիտին։» Եւ ճշմարիտ Անգլիան իր վերջին փոխառութեան համար վճարում էր 4%։

Շատ հետաքրքիր է Լէօն Սէի կարծիքը ներկայ արդիւնաբերական կրիզիսի մասին, որ այժմ ծանրանում է ամբողջ աշխարհի վրա։ Այդ կրիզիսը, Ֆրանսիական դրամագէտի կարծիքով, բոպէական չէ և դեռ երկար ժամանակ կը տևի։ Նա վերջին 25 տարիների չափազանց մեծ արդիւնաբերութեան հետևանք է։ Գործածողները ամբողջ Եւրոպայում և Ամերիկայում սակաւացրին իրանց պահանջները, որոնց կրկին շատացնելու համար հարկաւոր է փոքրացնել արդիւնաբերութեան ծախսերը, այսինքն արդիւնաբերած առարկաները էժանացնել։

ԹԻՒՐՔԻԱ

—

«Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ տպել էինք յունաց դեսպան Կունդուրիոտիսի խօսակցութիւնը մեծ վեզեր Սավֆէտ-փաշայի հետ սահմանները ուղղելու վերաբերութեամբ։ «Polit. Corresp.» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը այդ խօսակցութեան հետևանքների մասին։

«Պ. Կունդուրիոտիս սեպտեմբերի երկուսին մեծ վեզերից շատ անմխիթար պատասխան ստացաւ, այնպէս որ սեպտեմբերի 6-ին նա ուղարկեց իր առաջին թարգմանին մեծ վեզերի մօտ վճռողական պատասխան ստանալու համար։ Սավֆէտ-փաշա, որ յունաց դեսպանին առանձին լաւ ընդունելութիւն չարեց, թարգմանին ընդունեց շատ անքաղաքավարի կերպով և կոպիտ ասաց, որ նա մինչև անգամ չէ կարող հասկանալ, թէ ինչի են իրան ձանձրացնում Թիւրքաց կառավարութեան որոշ և պաշտօնական յայտնութիւններից յետոյ։ Իսկապէս մեծ վեզերը շատ ընդդէմ չէ, որ յօգուտ Յունաստանի մի քանի զիջումներ անվեն։ Ինչպէս երևում է նրա խօսակցութիւններից իր բարեկամների հետ նա ուրախութեամբ պատրաստ է մի քանի զիջումներ անել, որպէս զի խաղաղութիւնը պահպանվի, եթէ այդ գործը միայն իրանից կախում ունենար, բայց նրան յամառութեամբ ընդդիմանում է սուլթանը։ Սավֆէտ-փաշայի մինիստր ընկերներն էլ թշնամութեամբ են վերաբերվում Յունաստանի պահանջներին և մի և նոյն ժամանակ նոքա դրդված են զանազան պատճառներից։ Իրանց անընդունակութեամբ յայտնի պատերազմական և ծովային մինիստրները աշխատում են շողոքորթել սուլթանին, խորհուրդ տալով նրան ընդդիմանալ Յունաստանին և պարծենկոտութեամբ աւելացնում են, որ Յունաստանի փոքրիկ նաւատորմը և բանակը ամբողջութեամբ կարելի է կուլ տալ։ Մի և նոյն կարծիքի է և Մահմուդ-Դամադ-փաշա, որ թէպէտ մինիստրութեան չէ մասնակցում, բայց մեծ ազդեցութիւն ունի սուլթանի վրա։ Սէրվեր-փաշա ընդդէմ է յոյներին, որովհետև կամենում է ծառայել Ռուսաստանին։ Վերջապէս պետական խորհրդի նախագահ Սլիփաշա, յուսալով մեծ վեզերի պաշտօն ստանալ, հակառակվում է յոյների պահանջներին, որ այդպիսով հաճոյանայ, իսկ Սավֆէտ-փաշային նեղացնէ։

«Մահմուդ-Նէդիմ-փաշայի վերադարձի մասին լուրերը այնքան յամառութեամբ էին տարածում, որ նոքա վերջապէս անհանգիստ արին պ. Լայարդին և նա դիմեց սուլթանին հարցնելով թէ արդեօք ճշմարիտ նա հրաւիրել է հայրենիք վերադառնալ աքսորված նախկին մեծ վեզերին։ Աբդուլ-Համիդը հակասող պատասխան տուեց։ «Ես դեռ ոչինչ վճիռ չեմ ընդունել, ասել է նա, բայց Մահմուդ-փաշա ցաւակցութեան արժանի ծերունի է և մի և նոյն ժամանակ երկու տարի բանտում նստել է։ Շատ կարելի է, որ ես նրան թոյլ տամ վերադառնալ, բայց կրկնում եմ, որ դեռ ոչինչ չեմ վճռել։» Սուլթանի այդ պատասխանը շատ ուրախացրեց Մահմուդ-փաշայի բարեկամներին, որոնք աքսորականի վերադարձը անկարելի էին համարում։ Եթէ սուլթանը իրաւունք տայ Մահմուդ-փաշային վերադառնալ, պ. Լայարդ պէտք է հրաժարվի իր դիտաւորութենից Միդհաթ-փաշային դարձնել մեծ վեզերի պաշտօնը։ Անգլիացիք սաստիկ ցանկանում են Թիւրքաց կառավարութեան ղեկը յանձնել Միդհաթին, յուսալով որ Թիւրքաց սահմանադրութեան հեղինակը նրանց դործիք կը դառնայ։ Պատճառներ շատ կան, որոնք ստիպում են սուլթանին չը կամենալ Միդհաթի վերադարձը։ Այդ պատճառներից մէկն էլ այն է, որ սուլթանը հաստատ համոզված է, թէ Միդհաթ-փաշա մասնակցում էր Աբդուլ-Ազիզ սուլթանի գահընկեց անելուն և սպանմանը։ Իսկ Աբդուլ-Համիդը սաստիկ վախենում է նրանցից, որոնք թագաւորների վրա ձեռք են բարձրացրել։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ Միտրովիցայի շրջականներում կենտրօնացած Թիւրքաց զօրքերը և արնաուտները շտապով օգնութիւն են ուղարկում ապստամբներին գեներալ Սապարիի դէմ գործելու համար։ Ասում են, որ այդ օգնական զօրքերը բաւական շատ թնդանօթներ ունեն։

—Բերլինից հեռագրում են, որ 5/17 սեպտեմբերի կայսերութեան պարլամենտը ձայների նշանաւոր բազմութեամբ վճռեց սոցիալիստների դէմ ուղղած օրէնքի նախագիծը յանձնել քսան և մէկ անդամներից բաղկացած մասնաժողովին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 13/25 սեպտեմբերի։ Աֆգանիստանի սահմանների վրա հրամայած է զօրքեր կենտրօնացնել և անյապաղ սկսել պատերազմական գործողութիւններ եթէ հարկաւոր լինի։

ՎԻԵՆՆԱ, 12/24 սեպտեմբերի։ «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են, որ գեներալ Տօտլեբէն, իշխան Լօբանով-Ռոստովսկի և Սաբուրով այսօր ուղևորվում են Լիվադիա և կը վերադառնան մի շաբաթից յետոյ։ Սան-Ստէֆանօ և նրա շրջականները բոլորովին դատարկված են ռուսներից և դրաւված են Թիւրքերից։

ԲԵՐԼԻՆ, 12/24 սեպտեմբերի։ Դեսպան Լոֆտուս հասաւ այստեղ Լօնդօնից։

ԲԷԼԳՐԱԴ, 12/24 սեպտեմբերի։ 1000-ից աւելի բօսնիացի ապստամբները ապաստանվեցին Սերբիայի հողի վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Կովկասեան զինուորական շտաբի գլխաւորի օգնական գեներալ Շալիկով յանձնած է Նորին Բարձրութիւն Կովկասեան զօրքերի Գլխաւոր Հրամանատարի կարգադրութեանը, թողնելով շտաբի մէջ 19-դ հետևակ զօրաբաժնի շտաբի գլխաւոր գնդապետ Տօմիլով նշանակված է Կովկասեան զինուորական շրջանի շտաբի գլխաւորի օգնական։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար I մասն. աշխատասիրութիւն Զ. Նախարովի և Պաուլսօնի եղանակով. Բագրատայ Մելիքմանեանց։

Ծախվում է Զ. Գրիգորեանցի գրախանութում։

Տէօրիտիկական և փորձնական դասեր հասարակ և կրկնաթիւ գրապահութեան (բանկի, ֆաբրիկի առևտրական, կոմիսիոնների, երկաթուղու, բաժանորդական և այլն) և առևտրական թուաբանութեան, նմանապէս և Եզերկու սիստեմով։

Կուրսը չարունակվում է 6 ամիս։

Խ. Խաչատուրեան

Դիմել Լաբօրատորնի փողոց. Պարօվի տանը կամ Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկը։ 3—3

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կովկաս. գրաված. Զաք. Գրիգորեանցի։»

1. Պոլուիմպերիալ—կատակերգութիւն, երկու արարուածով (մանկական թատրոն. թարգմ. Ց. Նազարեանց. տպագրութիւն Զ. Գրիգորեան.

Գինն է 20 կոպէկ։

2. Նախապաշարմունք—I հատոր. աշխատասիրութիւն Ց. Նազարեանց։

Գինն է 50 կոպէկ։

—.

Շուտով դուրս կը գայ մամուլի տակից։

1. Ղուկասեանց—ընթերցարան. երր. տպագ.

Գինն է 40 կոպէկ։

Իգդիրու ուսումնարանին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսերէն լեզուի և թուաբանութեան։—Ցանկացողները կարող են շուտով իրանց պայմանները յայտնել ուսումնարանի հոգաբարձուներին հեռևեալ հասէով։—Въ Игдырѣ попечительству Армянскаго Духовнаго (или Вартановскаго) училища.

3—4

ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Գրավաճառանոցը ստացել է «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՑ» մայիս և յունիս ամիսների առանձին—առանձին համարները, որոնք արդէն ուղարկված են բաժանորդներին. օրերումն կը ստանամ յուլիս ամսուայ №—ը. նոյնպէս նամակաւ հաղորդեցին, որ օգոստոսի №—ն էլ ուղարկելու են շուտով։ Հրաւիրում ենք ցանկացողներին ուղարկել 8 ռուբլի և ստանալ այդ օգտակար ամսագիրը։

2—5

Այս օրերումն ստացվեց Թիֆլիսում Սիբիրիայի կողմից ԱՄԵՆԸԸՆՏԻՐ ԿՈՎԻ ԻԻՂ *որ ծախվում է Պ. Թամամշովի քարավանսարում Թուքունովի կանտորի առաջ. գինն է բոչկայիով գնողներու համար փութն 14 ռուբլ, իսկ ֆունտով 40 կ. կը գովենք աւելի այս իւղի համն և հոտն։*

1—2

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԱՅԱՆԵԱՆ *հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը բացվել է օգոստոսի 15-ին և այդ օրից սկսված ընդունվում են նոր աշակերտուհիներ։*

Տեսուչ Աբ. Յովհաննիսեանց

2—3

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել տալ դպրոցի որդեգիրներին կոչիկներ։ Այս մասին նշանակած է աճուրդ (առանց կրկնաձրգի) հոգաբարձական խորհրդարանում սեպտ. ամսիս 27-ին, երեկոյեան 8 ժամին։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ դպրոցի դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամն։

Продается тарантасъ и мебель въ домѣ Теранова № 24 спросить человѣка Щербакова отъ 10 ч. утра и 5 ч. вечера.

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

---

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրութեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր ստացուածներով, առածներով, հանելուկներով և յօդուածներով լրացրած։ Գինն է 35 կոպէկ։ Գումարով առնողներին զեղչումն կը լինի։

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած։ Գինն է 40 կոպ.։ Գումարով առնողներին զեղչումն կը լինի։

Ծանօթութիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի Թեմի պ. Թեմ. վերատեսչից իբրև սկզբնական դասագիրք հայոց լեզուի իր ձեռքի տակ եղած բոլոր ուսումնարաններում։ Սոքա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրեթէ ամենում, նմանապէս և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում են բացառապէս Կենտրոնական գրավաճառանոցում։ Մայրենի լեզուի գ. և դ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը։

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Ս. Մանդինեանի հեռևեալ աշխատութիւնները.

1) Նահապետական և հայրենի աշխարհ, երրորդ տարվայ ուսմունք և ընթերցմունք. գինն է 65 կ.։

2) Համառօտ մանկավարժութիւն. գինն է 1 ր. 50 կ.։

2—6

Մի երիտասարդ կամենում է Թիֆլիսում դասեր տալ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՑ, ՀԱՅՈՑ պատմութենից և ուրիշ լեզուներից (ռուսերէն և դպրերէն) և առարկաներից։ Յօժար է բընակվել ընտանեաց մէջ։ Պայմանները կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատան և Տէր-Յովհաննիսեանի կանդիտերսկում։

2—3

Մի բարձր դասատան գիմնազիստ որոնում է բեպետիտորի տեղ ընտանիքում։ Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը։

1—3

Լոյս տեսաւ

«ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իր մէջ մեր կեանքից առնված 600-ից աւելի նախապաշարումներ։—Գինն է 50 կ.։

Կարելի է ստանալ հեռևեալ հասցէով.—«Въ Тифлисѣ.—Кавказская книжная торговля З. П. Грикурова.»

Ց. Նազարեանց

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15. ՏԵՂԵԿԱՑՈՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Սեպտեմբերի 14-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը)	8	05
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1250	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	236	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 260—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	65
Վենայի կուրսը ածէ 121 դլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	40
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	45
„ միւս տեսակը.	7	35
„ չաքարաւազը .	6	—
„ տրանզիտը. .	5	90
„ մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	20
Միւս տեսակը հին սերմից.	7	20
Բուրդը թուչի . . .	6	50
„ թարաքամի .	3	50
Ալիւր Շորագալու . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	70
Մետաքս Նուխվայ. .	200	—
Կախեթունը. . . .	130	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	48	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մոկօի. . . .	25	—
„ Լիվանի . . .	18	—
„ մարտինկոյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3, 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ց մինչև սեպտեմբերի 1-ը։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ 10-ից մինչև 11 ժամ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ վեներական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէռնով աչքի հ.։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակստ կրծքային և ջղային հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտով կանանց և ջղային հ.։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ. Պէռնով աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵԱԼՏԱ. Ս. Կ. Նամակը չենք տպի։

—ՀԱՄԶԱՋԻՄԱՆ. Ա. Մի օրինակ «Մշակ» ստանալու համար պարտը կամենում է մեզ մի յիմար յօդուած տպել տալ։ Ասացէք պարտնին, որ նրա 10 ռուբլ մեզ հարկաւոր չէ։

—ՂԱՐՍ. Սոխակ. Վերջին նամակից լուր քաղեցինք։ Մնացածը կրկնութիւն էր։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Կ. Զ. Նամակից քաղուածք արինք, մնացածը չարժէ տպել։

—ԹԻՖԼԻՍ. Գ. Պ. Կարդացինք։ «Մանուկ մուշեցի» անցքը կը ապենք անանուն փոփոխութիւններով, իսկ Աղա Ղազարոս» պատկերը չենք տպի։

—ՄՕՍԿՎԱ. Ս. Դ. Ստացանք նամակը. ուրախութեամբ ներում ենք։ Կը սպասենք։ Շարունակեցէք գրել։

Дозволено Цензурою 14 Сентября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ